ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

- *Վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 224/2 սենյակ*
- *Օրը՝ 14.12.2018թ.*
- *Ժամը՝ 16:30*

1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերում առկա անհամապատասխանությունների շտկման մասին

(Ս.Փիրոյան)

1.1 Հաշվի առնելով, որ սույն ընթացակարգի թիվ 4 արձանագրության 5-րդ կետով նշվել է փաստաթղթերի ներկայացում նաև էլեկտրոնային կայքի միջոցով և ներկայացվող փաստաթղթերի ծավալը գերազանցում է էլեկտրոնային աճուրդ համակարգում թույլատրելի ծավալը՝ հանձնաժողովը որոշեց քննարկել «Լեբերոն» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային կայքի միջոցով սահմանված ժամկետում ներկայացված որակավորման փաստաթղթերը:

1.2 Ծանուցված բոլոր մասնակիցները սահմանված ժամկետում ուղղել են արձանագրված անհամապատասխանությունները, մասնակիցներն ուղղված փաստաթղթերը ներկայացրել են նաև էլեկտրոնային կայքի միջոցով, նկատի ունենալով, որ համակարգում հնարավոր չէ կցել ամբողջական փաստաթղթերը ծավալի գերազանցման առումով, բացառությամբ Ֆ/Ա Իշխան Միրզոյանի,

- **Ֆ/Ա Իշխան Միրզոյանի** կողմից 12-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագրում բացակայում էր ապրանքի հիմնական նկարագիրը, սահմանված ժամկետում մասնակցի կողմից չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը, համակարգում կցվել է այլ պատվիրատուի համար մատակարարվելիք ապրանքի ֆայլ:

1.2 Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել **Ֆ/Ա Իշխան Միրզոյանի** կողմից ներկայացված հայտը 12-րդ չափաբաժնի մասով և ծանուցել 2-րդ տեղ զբաղեցնող մասնակցին՝ առաջարկելով հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով ներկայացնել նշված չափաբաժինների մասով իրենց որակավորումը հավաստող փաստաթղթերը: Փաստաթղթերը սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում, մասնակիցների հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Հ/Հ	Անվանումը	Մերժված մասնակցի	2-րդ տեղ զբաղեցնող մասնակցի
		Անվանումը	Անվանումը
12	Կարտոֆիլ	Ֆ/ա Իշխան Միրզոյան	Ֆոտոն ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(*Ս.Փիրոյան*)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 1-ին կետում նշված փաստաթղթերի ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 10:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	*Ս.Փիրոյան*	
Հանձնաժողովի անդամներ՝	*Է.Գրիգորյան*	
	Հ.Հարությունյան	
	Լ.Բաղդասարյան	
	Լ.Արտաշեսյան	
Հանձնաժողովի քարտուղար՝	*Ա. Համբարձումյան*	